Հետաքննող լրագրողներ

1/3 Բյուզանդի փ., 8-րդ հարկ, Երևան-0010, Հայաստան
www.hetq.am
info@hetq.am | hetq@hetq.am
(+374) 10 563363 | 10 580219

Գեղարքունիքի մարզպետ
Կարեն Սարգսյանին

«Հետք» ինտերնետային թերթի լրագրող
Տրդատ Մուշեղյանից

(Էլ. փոստ՝ trdat.musheghyan@hetq.am
հեռ.՝ 098-488-228)

Հարցում

Հարգելի՛ պրն Սարգսյան,

«Հետքը» 28.03.2023 հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տեղեկատվություն ստորև նշված հարցերի վերաբերյալ: Ձեր ուղարկած (04.04.2023) պատասխանում տեղեկություններ կան միայն Գավառ, Վարդենիս, Մարտունի և Սևան քաղաքների մասին: Խնդրում եմ տեղեկություններ տրամադրել նաև մյուս բնակավայրերի վերաբերյալ: Ուղարկված հարցումը և ստացած պատասխանը կցում եմ նամակին:

«Հետքը» հոդվածաշար է պատրաստում Հայաստանի կեղտաջրերի մաքրման կայանների մասին: Հոդվածների միջոցով ցույց ենք տալու մաքրման կայանների և դրանց բացակայության ազդեցությունը շրջակա միջավայրի, հանրային առողջության և կենսական այլ հարցերի վրա: Ուստի խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Գեղարքունիքի մարզի ո՞ր համայնքները և բնակավայրերն ունեն կոյուղի, որոնք՝ ոչ:

2. Որտե՞ղ են թափվում Գեղարքունիքի մարզի բնակավայրերի կեղտաջրերը (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ բնակավայրերի):

3. Գեղարքունիք մարզի ո՞ր համայնքներում է երբևէ գործել կամ այժմ գործում կեղտաջրերի մաքրման կայան:

Խնդրում եմ վերը նշվածի վերաբերյալ տրամադրել մանրամասն տեղեկություններ, որպեսզի տվյալները համադրելի լինեն մյուս մարզերի տրամադրած տվյալների հետ:

Հարգանքով՝

«Հետք» թերթի լրագրող Տրդատ Մուշեղյան

05.04.2023